

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՃԱՆԱԿԱՐԿԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ

ք. Երևան

24.05.2022թ.

Խորհրդի անդամներ՝

Գ. Սանոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, նախագահ
Ք. Ղալեչյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտը համակարգող), քարտուղար
Վ. Դավթյան	ՀՀ փոխվարչապետի գրասենյակի ղեկավար, խորհրդի անդամ
Ա. Իսախրյան	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ, խորհրդի անդամ
Ա. Ղուլարյան	Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահ, խորհրդի անդամ
Վ. Ղազարյան	ՀՀ ոստիկանության պետ, խորհրդի անդամ
Ս. Թովմասյան	Կադաստրի կոմիտեի ղեկավար, խորհրդի անդամ
Գ. Շախբազյան	Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար, խորհրդի անդամ

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) նիստն իրականացվել է հեռակա կարգով՝ օրակարգային հարցերի վերաբերյալ խորհրդի անդամների կողմից գրավոր քվեարկության /հարցման/ միջոցով:

Խորհրդի նիստն իրավազոր է:

Հեռակա կարգով քվեարկությանը մասնակցել է խորհրդի 10 անդամներից 8-ը:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, խորհրդի նախագահ Գ. Սանոսյանի կողմից հրավիրվել է խորհրդի նիստ հետևյալ օրակարգային հարցերով /այսուհետ՝ Օրակարգ/.

1. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կառուցվածքի հաստատում /Հավելված 1/:

2. Հիմնադրամի հաստիքացուցակի հաստատում /Հավելված 2/:
3. Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատում /Հավելված 3/:
4. Հիմնադրամի ներքին կարգապահական կանոնների հաստատում /Հավելված 4/:
5. Հիմնադրամի 2022թ. բյուջեի հաստատում ըստ ծրագրերի:
6. Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի /աուդիտորի/ ընտրություն:

Խորհրդի անդամների կողմից օրակարգի վերաբերյալ առարկություններ կամ առաջարկություններ չեն ստացվել, ուստի օրակարգը համարվել է հաստատված:

Համաձայն «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կանոնադրության 38-րդ կետի՝ Խորհուրդն օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ անցկացված հեռակա կարգով քվեարկության արդյունքում կայացրեց հետևյալ որոշումները.

1. Հիմնադրամի կառուցվածքի հաստատում:

Քվեարկության արդյունքում 8 կողմ 0 դեմ ձայնով Խորհուրդը որոշեց՝

Հաստատել Հիմնադրամի Կառուցվածքը՝ համաձայն Օրակարգի Հավելված 1-ի:

2. Հիմնադրամի հաստիքացուցակի հաստատում:

Քվեարկության արդյունքում 8 կողմ 0 դեմ ձայնով Խորհուրդը որոշեց՝

Հաստատել Հիմնադրամի Հաստիքացուցակը՝ համաձայն Օրակարգի Հավելված 2-ի:

3. Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատում:

Քվեարկության արդյունքում 8 կողմ 0 դեմ ձայնով Խորհուրդը որոշեց՝

Հաստատել Հիմնադրամի գույքի տնօրինման կարգը՝ համաձայն Օրակարգի Հավելված 3-ի:

4. Հիմնադրամի ներքին կարգապահական կանոնների հաստատում:

Քվեարկության արդյունքում 8 կողմ 0 դեմ ձայնով Խորհուրդը որոշեց՝

Հաստատել Հիմնադրամի ներքին կարգապահական կանոնները՝ համաձայն Օրակարգի Հավելված 4-ի:

5" Հիմնադրամի 2022թ. բյուջեի հաստատում:

Քվեարկության արդյունքում 8 կողմ 0 դեմ ձայնով Խորհուրդը որոշեց՝

Հաստատել Հիմնադրամի 2022թ. բյուջեն՝ համաձայն ներկայացված ծրագրերի նախահաշիվների:

6" Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի /աուդիտորի/ ընտրություն:

Քվեարկության արդյունքում 8 կողմ 0 դեմ ձայնով Խորհուրդը որոշեց՝

Հաստատել «ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերության ընտրությունը որպես Հիմնադրամի աուդիտ իրականացնող իրավաբանական անձ /աուդիտոր/:

Խորհրդի նախագահ՝



Գ. Սանոյան

Խորհրդի քարտուղար, անդամ՝



Ք. Ղալեյան